ՈՐՈՇՈՒՄ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ՆԻՍՏԻ
(արձանագրություն N 4)

Ղեկավարվելով Համալսարանի կանոնադրության 20-րդ կետի թ) ենթակետով և լսելով ու քննարկելով Համալսարանում ասպիրանտների և հայցորդների ատեստավորման նախապատրաստման աշխատանքների ուսումնասիրության արդյունքների մասին հարցը (զեկուցող՝ Համալսարանի պրոռեկտոր Ա.Երեմյան)

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հանձնարարել Համալսարանի ամբիոններին և ֆակուլտետներին 2012 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում կազմակերպել և անցկացնել համապատասխան ամբիոնի և ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
2. Համահամալսարանական ամբիոնների ասպիրանտների և հայցորդների ատեստավորումն անցկացնել համապատասխան ամբիոններում, իսկ մնացած ամբիոնների ասպիրանտների և հայցորդների ատեստավորումը՝ ամբիոնում, ներկայացնելով արդյունքները ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:
3. Ատեստավորման արդյունքների մասին որոշումների կրկնօրինակները մինչև 2012թ. դեկտեմբերի 7-ը հանձնել Համալսարանի ասպիրանտուրայի բաժին:
4. Ատեստավորման ընթացում, ի թիվս այլ հարցերի, անդրադառնալ ասպիրանտի կամ հայցորդի՝

ա) ուսումնահետազոտական և գիտական աշխատանքների անհատական պլանի (ասպիրանտի համար) կամ աշխատանքային պլանի (հայցորդի համար) առկայությանը, այդ պլանով նախատեսված աշխատանքի կատարմանը,

բ) հայցորդի կամ ասպիրանտի ընդհանուր և մասնագիտական պատրաստվածությանը (որակավորման քննություններ, գիտական աշխատություններ և այլն),

գ) ատենախոսության թեմային(թեմայի հիմնավորմանը, ներառյալ՝ թեմայի անվանմանը, մասնագիտական ուղղվածությանը (գիտության բնագավառը և մասնագիտությունն ըստ աստիճանաշնորհման անվանացանկի),

դ) թեմայի համապատասխանությանը ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը, հետազոտված լինելու աստիճանին, նորությանը, արդիականությանը, կիրառական նշանակությանը),

ե) ատենախոսության գիտական ղեկավարին (իսկ երկու կամ հարակից մասնագիտություններով կատարվող թեկնածուական ատենախոսությունների դեպքում, ըստ անհրաժեշտության,համաղեկավարներին) ներկայացվող ձևական պահանջներին, ներառյալ՝ ղեկավարի համաձայնությունն ատենախոսության ղեկավար լինելու մասին և ՀՀ ԲՈՀ-ի սահմանված կարգով ատենախոսությունը ղեկավարելու իրավունքի առկայությունը:

5. Մինչև ՀՀ իրավասու մարմինների կողմից հայցորդների համար կրեդիտային համակարգի ներդրումը հաստատել «Ատենախոսության թեմայի հաստատման ժամանակավոր կարգը»:

Ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան